ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«09» «հոկտեմբերի» 2023 թ. № 349-Լ

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածի 1-ին մասին «թ» կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Անտառների վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման կազմակերպման նպատակով՝

1) հաստատել Անտառների վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ)՝ համաձայն N1 հավելվածի,

2) ստեղծել Միջոցառումների կազմակերպման, գնահատման և համակարգման աշխատանքային խումբ (այսուհետ՝ Աշխատանքային խումբ), հաստատել դրա անհատական կազմն ու աշխատակարգը՝ համաձայն N2 և N3 հավելվածների:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

10/9/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

02 «հոկտեմբերի» 2023թ.

ք. Երևան

Հավելված N 1
Շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի «հոկտեմբերի» «03» N 349-Լ հրամանի

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ՀԱՄԱԿԱՏԱՐՈՂ-ՆԵՐ	ԺԱՄԿԵՏՆԵՐ	ՖԻՆԱՆՍԱ-ՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ	ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
	ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ					
1.	Ստեղծել մասնագիտական հանձնախումբ (այսուհետ՝ մասնագիտական հանձնախումբ) վնասակար օրգանիզմներով վարակված, ինչպես նաև հիվանդության ախտանիշներ ունեցող, թուլացած տնկարկների վերաբերյալ ներկայացված նյութերի գնահատման և հետագա անհրաժեշտ աշխատանքների պլանավորման նպատակով	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն	-	2023 թվական	Ֆինանսավորում չի ենթադրում	Մասնագիտական աշխատանքների իրականացում
2.	Ուսումնասիրել գործող կամ մշակվող փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ	Աշխատանքային խումբ	2023 թվականի հոկտեմբեր և շարունակական	Ֆինանսավորում չի ենթադրում	

	ներկայացնել առաջարկներ դրանցում խնդրի կարգավորման հետ կապված այլ դրույթներ ներառելու վերաբերյալ	պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն, անտառային քաղաքականության վարչություն, անտառային կոմիտե				
3.	Առանձնացնել և վերհանել «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության շուրջ 3800 հա սոճու տնկարկների ուսումնասիրության անհրաժեշտություն ներկայացնող տարածքների (AOI) շեյփ ֆայլերը և այդ տարածքների համար ստանալ բազմասպեկտրալ արբանյակային պատկերներ, հնարավորության դեպքում իրականացնել այդ տարածքների դրոնային հանույթ հիպերսպեկտրալ կամերայի կիրառմամբ	«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին	2023 թվականի հոկտեմբեր և շարունակական	Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն EU4Sevan ծրագիր	Վնասակար օրգանիզմներով վարակված օջախների առանձնացում և քարտեզագրում
4.	Գնահատել/գույքագրել արբանյակային պատկերներով առանձնացված տնկարկները, ինչպես նաև հիվանդության ախտանիշներով	Մասնագիտական հանձնախումբ	Անտառային կոմիտե, «Հայանտառ» պետական ոչ	2023 թվականի հոկտեմբեր և շարունակական	Ֆինանսավորում չի ենթադրում	Հիվանդ և սպառնալիքի տակ գտնվող տնկարկների/

	հաշվեգնահատված ծառերը, առաջնահերթության կարգով «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության անտառնկարկների մասով		առևտրային կազմակերպություն, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն			ծառերի, ինչպես նաև վնասատուների քանակական և որակական վիճակի գնահատում
5.	Առկա կառավարման պլաններում, իսկ դրանց բացակայության ժամանակ մյուս փաստաթղթերում ուսումնասիրել և առանձնացնել այն տեղամասերը, որտեղ կարիք կա իրականացնել միջոցառումներ	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության վարչություն, անտառային քաղաքականության վարչություն, անտառային կոմիտե, Աշխատանքային խումբ, Մասնագիտական հանձնախումբ	2023 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներուժով	Ծառուտի դիմադրողականության բարձրացում վնասատուների և հիվանդության տարածման կանխում, անտառի արտադրողականության բարձրացում
6.	Իրականացնել հաշվեգնահատված սանիտարական հատման ենթակա ծառերի հատումներ	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն,	Անտառային կոմիտե, այլ գործընկերներ	2023 թվականի հոկտեմբեր	«Սևան» ազգային պարկի, «Հայանտառ» պետական ոչ	Հիվանդ և վնասված ծառերի հեռացում տարածքից, հիվանդության

		«Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն			առևտրային կազմակերպու-թյան ներուժով	տարածման կանխում
7.	Սահմանել հատված փայտանյութի տեղաշարժի և իրացման մեխանիզմներ, դիտարկելով փայտանյութի օգտագործման հնարավորությունը պարտադիր կանոնների և չափանիշների պահպանման համատեքստում	Աշխատանքային խումբ	Անտառային կոմիտե, Մասնագիտական հանձնախումբ, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	2023 թվականի հոկտեմբեր	Օրենքով չարգելված միջոցներ	Փայտանյութի հնարավորինս անվտանգ օգտագործում, վարակի տարածման կանխարգելում
8.	Ներառել ճապոնական փորձը, ապահովել Ճապոնիայի դեսպանատուն համագործակցության՝ խնդրի շուրջ արագ համագործակցության ուղիներ գտնելու նպատակով	Շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցու-թյան վարչություն	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն	2023 թվականի հոկտեմբեր	Ֆինանսավորում չի ենթադրում	Միջազգայնորեն առկա փորձի օգտագործում, գործարկված պրակտիկաների կիրառում
9.	Աշխատանքային խումբի կողմից հաստատված գործողությունների իրականացումից առաջ և հետո, իսկ անհրաժեշտության	Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժին	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայանտառ»	2023 թվականի հոկտեմբեր և շարունակական	Ֆինանսավորում չի ենթադրում	Թափանցիկ և արդյունավետ աշխատանքներ

	դեպքում նաև գործողությունների կատարման ընթացքում կազմակերպել քննարկումներ (արդյունքահեն մոնիթորինգի իրականացում)		պետական ոչ առևտրային կազմակերպու-թյուններ, այլ գործընկերներ			
ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						
10	Շարունակաբար իրականացնել գիտական ուսումնասիրություններ, հիվանդության զարգացման դինամիկան և ծավալները գնահատելու նպատակով	Գիտությունների ազգային ակադեմիայի «Կենդանաբանու-թյան և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Այլ գործընկերներ	2023 թվական և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Գիտական եզրակացություն-ներ, գիտահեն որոշումներ
11	Ներկայացնել առաջարկներ հատված տարածքներում անտառվերականգնման նախագծի մշակման, ժամանակացույցի հաստատման, աշխատանքների իրականացման վերաբերյալ	Աշխատանքային խումբ Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանու թյան	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	2023 -2024 թվական (աշուն- գարուն)	Օրենքով չարգելված միջոցներ	Էկոհամակար-գերի վիճակի կայունացում, հիվանդության տարածման և բացասական ազդեցության թուլացում/ կանխում

		քաղաքականության վարչություն, անտառային քաղաքականության վարչություն, անտառային կոմիտե,				
12	Հանրային լայն իրազեկման կազմակերպում և իրականացում, խնդրի հրատապության վտանգավորության մասին հանրային իրազեկման արշավների կազմակերպում	Շրջակա միջավայրի նախարարության հասարակայնության հետ կապերի բաժին	Հասարակական կազմակերպություն-ներ	2023 թվականի հոկտեմբեր և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Հանրային իրազեկման ապահովում, թափանցիկ և արդյունավետ աշխատանքներ
13	ՀՀ տարածքում անտառվերականգնման աշխատանքներում սոճիների հիվանդացության խնդրի ներառում	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն	Անտառպատում և անտառվերականգ-նում իրականացնող գործընկերներ	2023 թվական և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Դիմակայուն էկոհամակարգի ստեղծում
ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ						

14	Անտառային վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելման կազմակերպման գործընթացում միջազգային գործընկերների ներգրավվում	Շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչություն , Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն	«Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, այլ գործընկերներ	2023 թվական և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Փորձի փոխանակում, լավագույն փորձի տեղայնացում
15	Մոդելավորել վնասատուների վարքագծային դինամիկան՝ (ջերմաստիճան, խոնավություն և այլն) և հատկորոշել դրա հնարավոր տարածման թիրախները, օգտագործել միջազգային պրակտիկան	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն, անտառային քաղաքականության վարչություն, անտառային կոմիտե	Աշխատանքային խումբ, այլ գործընկերներ	2023 թվական և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Հիվանդություն-ների տարածման կանխատեսման և կանխարգելման իրականացում
16	Շարունակական մոնիթորինգի և հսկողության իրականացում	«Հիդրոօդերևութա-բանության և մոնիթորինգի	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	2023 թվական և շարունակական	«Հիդրոօդերևութա-բանության և մոնիթորինգի	Հիվանդություն-ների կանխատեսելիու-

		կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպություն			կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության ներուժով	թյան բարձրացում, արագ արձագանքման միջոցառումների ապահովում, հետագա տարածման ինտենսիվության նվազեցում և կանխարգելում
17	Միջազգային մակարդակում գործող ուղեցույցերի ուսումնասիրություն, տեղայնացում	Աշխատանքային խումբ	Շրջակա միջավայրի նախարարություն	2023 թվական և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Կարողությունների ձևավորում
18	Անձնակազմի մասնագիտական հմտությունների շարունակական զարգացում՝ վերապատրաստումներ, այդ թվում՝ հիվանդությունների վաղ հատկորոշման հմտությունների ձևավորում	Շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքները կառավարող պետական ոչ առևտրային կազմակերպություն-ներ, «Հիդրոօդերևութա-բանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ	Աշխատանքային խումբ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, այլ գործընկերներ	2023 թվական և շարունակական	Օրենքով չարգելված միջոցներ	Հիվանդություն-ների տարածման կնխատեսում և կանխարգելում Անձնակազմի կարողությունների արդիականացում և հիվանդություն-ների տարածման կանխատեսման և կանխարգելման լավարկում

		առևտրային կազմակերպության, «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն				

Հավելված N 2
Շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի «հոկտեմբերի» «09» N 349- Լ հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Արամ Մեյմարյան	շրջակա միջավայրի նախարարի տեղակալ (Աշխատանքային խմբի նախագահ),
Արայիկ Հունանյան	շրջակա միջավայրի նախարարության «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական հետազոտությունների մշտադիտարկման և կադաստրի վարման բաժնի ղեկավար,
Ատոմ Գրիգորյան	շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ,
Արթուր Պետրոսյան	շրջակա միջավայրի նախարարության անտառային քաղաքականության վարչության պետ,
Դավիթ Աբովյան	շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտե «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն գործունեության վերլուծության և զարգացման ծրագրերի բաժնի պետ,
Արտակ Մնեյան	սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Գեղարքունիքի մարզային կենտրոնի գլխավոր տեսուչ,
Դավիթ Զանգեզուրյան	Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,
Հակոբ Մաթևոսյան	շրջակա միջավայրի նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Աշխատանքային խմբի քարտուղար,
Արմենակ Տեր-Գրիգորյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոնոմիական ֆակուլտետի դեկան (համաձայնությամբ),
Գեորգի Ֆայվուշ	Գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի երկրաբուսաբանության և էկոլոգիայի ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ (համաձայնությամբ),

Մարկ Քալաշյան	Գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ),
Այսեր Ղազարյան	«Անտառների կայուն կառավարում» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ),
Խաչիկ Մարկոսյան	«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ (համաձայնությամբ),
Վահե Մարտիրոսյան	«Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության գործառնական ղեկավար (համաձայնությամբ):

Հավելված N 3
Շրջակա միջավայրի նախարարի
2023 թվականի «հոկտեմբերի» «09» N 349-Լ հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են Աշխատանքային խմբի գործունեության հետ կապված հարաբերությունները:

2. Աշխատանքային խումբն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հանրապետության նախագահի հրամանագրերով, Կառավարության որոշումներով, դրամաշնորհային ծրագրի համաձայնագրով և սույն աշխատակարգով:

II. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3. Աշխատանքային խմբի գործունեության նպատակն է.

1) միջոցառումների կազմակերպման, գնահատման և համակարգման աշխատանքների իրականացումը,

2) միջոցառումների իրականացման համար քննարկումների արդյունքում մասնագիտական եզրակացություն տրամադրելը,

3) միջոցառումների իրականացման արդյունավետության և հաշվետվողականության ապահովումը:

4. Աշխատանքային խումբն իր նպատակների իրականացման համար.

1) իրականացնում է Միջոցառումների կատարման ընդհանուր համակարգումը,

2) գնահատում և քննարկում է Միջոցառումների բովանդակության և իրականացման տարբերակները,

3) ներկայացնում է Միջոցառումների կետերի վերաբերյալ իր տեսակետները, ինչպես նաև դրանց իրականացման նպատակով անհրաժեշտ քայլերի վերաբերյալ առաջարկները և խորհրդատվությունը:

4) Աշխատանքային խումբը հաշվետու է շրջակա միջավայրի նախարարին:

III. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով (այդ թվում՝ հեռավար եղանակով կամ հիբրիդային ձևաչափով), որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ շրջակա միջավայրի նախարարությունից ստացված գրության հիման վրա:

6. Արտահերթ նիստերը Աշխատանքային խումբը գումարում է Միջոցառումների իրականացման ընթացքում առաջացած հարցերի և խնդիրների լուծման համար՝ Աշխատանքային խմբի նախագահի կամ Աշխատանքային խմբի անդամների առնվազն 2/3-ի առաջարկությամբ:

7. Աշխատանքային խմբի նիստերն իրավազոր են, եթե դրան մասնակցում են Աշխատանքային խմբի անդամների կեսից ավելին:

8. Աշխատանքային խմբի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել այլ մասնագետներ:

9. Յուրաքանչյուր նիստ սկսվում է օրակարգի հաստատմամբ:

10. Աշխատանքային խումբը կայացնում է որոշումներ և առաջարկությունների փաթեթով ներկայացնում շրջակա միջավայրի նախարարին:

11. Աշխատանքային խմբի որոշումն ընդունվում է, եթե դրա օգտին քվեարկել են Աշխատանքային խմբի նիստին մասնակցած անդամների կեսից ավելին:

12. Ձայների հավասարության դեպքում Աշխատանքային խմբի նախագահի ձայնը որոշիչ է:

13. Աշխատանքային խմբի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Աշխատանքային խմբի նիստերը,

2) ապահովում է Աշխատանքային խմբի բնականոն գործունեությունը,

3) համակարգում է Աշխատանքային խմբի աշխատանքը,

4) պատասխանատու է Աշխատանքային խումբի աշխատանքների արդյունավետ իրականացման համար,

5) իրավասու է Աշխատանքային խմբի անդամի փոփոխության անհրաժեշտությամբ պայմանավորված առաջարկությամբ դիմել նախարարությանը,

5) ներկայացնում է Աշխատանքային խումբը շրջակա միջավայրի նախարարությունում և այլ կազմակերպություններում:

14. Աշխատանքային խմբի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Աշխատանքային խմբի անդամներից մեկը՝ Աշխատանքային խմբի նախագահի հանձնարարությամբ:

15. Աշխատանքային խմբի անդամները.

1) մասնակցում են Աշխատանքային խմբի նիստերին, աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին, հետևում դրանց կատարման ընթացքին,

2) Աշխատանքային խմբի անդամը Աշխատանքային խմբի որոշմանը դեմ կամ համաձայն չլինելու դեպքում, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, ինչը կցվում և ներառվում է Աշխատանքային խմբի նիստի արձանագրության մեջ,

3) մասնակցում են համապատասխան մասնագիտական եզրակացության տրամադրման գործընթացին,

4) ծանոթանում են Աշխատանքային խմբի նիստերի արձանագրություններին:

16. Աշխատանքային խմբի անդամների կողմից լրացվում և ստորագրվում է քվեաթերթիկ՝ համաձայն Ձև 1-ի:

17. Աշխատանքային խմբի անդամի պարտականությունները կարող են դադարեցվել Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի հրամանով՝ Աշխատանքային խմբի նախագահի առաջարկությամբ կամ Աշխատանքային խմբի անդամի նախաձեռնությամբ:

18. Քվեաթերթիկները կցվում են Աշխատանքային խմբի նիստի արձանագրությանը:

19. Աշխատանքային խումբն անհրաժեշտության դեպքում կարող է այցելել և տեղում ծանոթանալ իրավիճակին:

20. Աշխատանքային խմբի արձանագրություններն ստորագրում է Աշխատանքային խմբի նախագահը:

21. Աշխատանքային խմբի քարտուղարը.

1) մասնակցում է Աշխատանքային խմբի նիստերին,

2) նախապատրաստում է Աշխատանքային խմբի նիստերի անցկացումը,

3) Աշխատանքային խմբի նիստի օրակարգը և քննարկվելիք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը էլեկտրոնային փոստով Աշխատանքային խմբի անդամներին է հանձնում ոչ ուշ, քան նիստից երեք օր առաջ,

4) ամփոփում և Աշխատանքային խմբի նախագահին է ներկայացնում քվեարկության արդյունքները,

5) արձանագրում է Աշխատանքային խմբի նիստերը, դրանց հիման վրա կազմում է արձանագրության նախագծեր և էլեկտրոնային փոստով համաձայնեցնում է Աշխատանքային խմբի անդամների հետ,

6) հետևում է Աշխատանքային խմբի որոշումների կատարման ընթացքին և նիստում զեկուցում դրանց կատարման ընթացքի մասին,

7) իրականացնում է Աշխատանքային խմբի աշխատանքների հետ կապված գործավարությունը,

8) հավաքագրում է Աշխատանքային խմբի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները,

9) կազմակերպում է Աշխատանքային խմբի արձանագրությունների համարակալումը, պահպանումը և դրանց պատճենների տրամադրումը Աշխատանքային խմբի անդամներին,

10) Աշխատանքային խմբի նիստի արձանագրությունները Աշխատանքային խմբի նախագահն ուղեկցող գրությամբ ներկայացնում է շրջակա միջավայրի նախարարին:

22. Աշխատանքային խմբի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված այլ անձինք: Անհրաժեշտության դեպքում Աշխատանքային խմբի

նիստերին կարող են հրավիրվել օրակարգի հարցերին առնչվող համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

23. Աշխատանքային խմբի գործունեությունը կարող է դադարել շրջակա միջավայրի նախարարի հրամանով:

24. Աշխատանքային խմբի գործունեության դադարումից հետո նրա գործունեությունը վերաբերող բոլոր թղթերը, փաստաթղթերը ենթակա են պահպանության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախարարության քարտուղարությանը հանձնման:

Ձև 1

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԱՄ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄԻ

Անունը	Ազգանունը	Պաշտոնը	
Կայացված որոշման բովանդակությունը		կողմ	դեմ
1.			
2.			
3.			
4.			
5.			
Ստորագրությունը			